ԱՆՈՏԱՑԻԱ
«Տեխնոլոգիական պրոդուկտների զարգացում»

Առարկայի բովանդակության համառոտ նկարագրություն

SS պրոդուկտի մշակումը դասվում է գործնական առարկաների շարքին, որը տրամադրում է ուսանողներին տեսական հիմք և կիրառական գործիքակազմ՝ գաղափարից դեպի պրոդուկտ կամ ծառայության վերափոխման գործընթացի և վերջիններիս շուկայում ներկայացման համար: Այս հմտությունները կարևոր նշանակություն ունեն ինչպես ժամանակակից գործարարի համար՝ իր սեփական ստարտափը խթանելու գործում, այնպես էլ SS ընկերությունում որպես պրոդուկտ մենեջեր հանդես գալու համար:
Պրոդուկտի մշակման ընթացակարգային ներկայացումը հիմք է հանդիսանում այս առարկայի համար և ներառում է գաղափարների զարգացում, պրոդուկտի կյանքի փուլերի ուսումնասիրություն, պրոդուկտի նախնական օրինակի (MVP) ներկայացում և ընթացիկ թեստավորման և որակի հսկողություն իրականացում:
Առարկայի անկյունային քար է հանդիսանում պրոդուկտ մենեջմենթի «էջայլ» մեթոդաբանության ներկայացումը ուսանողներին, առանց որի ժամանակակից SS պրոդուկտի զարգացում հնարավոր չէ պատկերացնել: «Էջայլ» մեթոդաբանության ներկայացնելու կարևորությունը կայանում է նրանում, որ վերջինս թույլ է տալիս կրճատել գաղափարից մինչև իրական արտադրանքի գործարկման ցիկլը, արտադրանքի նախնական տարբերակը ներկայացնել (MVP) շատ ավելի արագ և վաղ փուլում, որից հետո թույլ է տալիս լրամշակել և կատարելագործել պրոդուկտը հետագա պարբերական թողարկումների միջոցով:
Այս առարկան ուսանելու հայեցակարգը ներառում է ուսանողների և նրանց հետաքրքրությունների շրջանակների վրա հիմնված ինտերակտիվ դասընթացների անցկացում, տեսագործնական օրինակների

ուսումնասիրություն և ՀՀ ՏՏ ոլորտից առաջատար մասնագետների ներգրավում որպես հրավիրված դասախոս:

Վերջնական քննության ձև - ծրագրի / պրոդուկտի ներկայացում: